ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության

"Բանջարաբոստանային և տեխնիկական

մշակաբույսերի գիտական կենտրոն" ՓԲԸ-ի

տնօրեն,գյուղ.գիտ. դոկտոր՝ _____

Գ. Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ

" 30 " հունիսի 2026թ.

# Կ Ա Ր Ծ Ի Ք

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արմեն Կարենի Սոլոմոնյանի «Խաղողի սորտի և կլոնի առանձնահատկությունները, դրանց անդրադարձը գինու որակական հատկանիշների վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ե.18.01 – «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

### *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Խաղողագործությունն ու գինեգործությունը հանդիսանում են գյուղատնտեսության և սննդարդյունաբերության կարևոր ճյուղեր, որոնց արդյունավետ զարգացումը մեծապես պայմանավորված է բարձրորակ հումքի արտադրությամբ: Գինու որակի ձևավորման գործում վճռորոշ դեր են խաղում խաղողի սորտային և կլոնային առանձնահատկությունները, որոնք ազդում են բերքատվության, կենսաքիմիական կազմի, տեխնոլոգիական հատկությունների, ինչպես նաև պատրաստի գինու օրգանոլեպտիկ ցուցանիշների վրա:

Ժամանակակից գինեգործության պայմաններում մեծանում է բարձր որակական հատկանիշներով, կայուն և տեղական պայմաններին հարմարված սորտերի ու կլոնների ընտրության անհրաժեշտությունը: Կլոնային սելեկցիան հնարավորություն է տալիս նույն սորտի սահմաններում առանձնացնել առավել արժեքավոր ձևեր, որոնք կարող են ապահովել ավելի բարձր բերք, հումքի բարելավված որակ և գինու մրցունակություն:

Բացի այդ, կլիմայական փոփոխությունների պայմաններում առավել կարևոր է դառնում սորտերի և կլոնների ուսումնասիրման ու գնահատման հարցը՝ նպատակ

ունենալով բացահայտել այն ձևերը, որոնք առավել արդյունավետ են պահպանում իրենց արտադրողականությունն ու տեխնոլոգիական արժեքը: Հայաստանի հարուստ խաղողային գենոֆոնդի պահպանման, ռացիոնալ օգտագործման և բարձրարժեք գինիների արտադրության տեսանկյունից թեման ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն:

Հետևաբար, խաղողի սորտերի և կլոնների առանձնահատկությունների ուսումնասիրությունը և դրանց ազդեցության գնահատումը գինու որակական հատկանիշների վրա հանդիսանում է արդիական գիտական խնդիր, որի լուծումը կնպաստի գինեգործության զարգացմանը, բարձրորակ արտադրանքի ստացմանը և ոլորտի մրցունակության բարձրացմանը:

## *Աշխատանքի նպատակը և խնդիրները*

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել խաղողի տարբեր սորտերի և դրանց կլոնների կենսաբանական, ագրոնոմիական ու տեխնոլոգիական առանձնահատկությունները, գնահատել դրանց ազդեցությունը խաղողի բերքի որակական ցուցանիշների և ստացվող գինու ֆիզիկաքիմիական ու օրգանոլեպտիկ հատկությունների վրա, ինչպես նաև առանձնացնել գինեգործական առավել արժեքավոր սորտերն ու կլոնները՝ բարձրորակ և մրցունակ գինիների արտադրության համար:

Ատենախոսության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել խաղողի հետազոտվող սորտերի և կլոնների ամպելոգրաֆիկ առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել ողկույզի մեխանիկական և կենսաքիմիական կազմի (շաքարայնություն, թթվայնություն, pH, ֆենոլային միացություններ և այլն): առանձնահատկությունները:
3. Միկրոգինեգործության մեթոդով պատրաստել փորձնական գինիներ և ուսումնասիրել դրանց ֆիզիկաքիմիական և օրգանոլեպտիկ (համտեսային) հատկությունները:
4. Կատարել սորտային և կլոնային առանձնահատկությունների համեմատական գնահատում և դրանց ազդեցության վերլուծություն գինու որակի վրա:

5. Գիտականորեն հիմնավորել առավել արժեքավոր կլոնների ընտրության և կիրառման նպատակահարմարությունը:

### *Աշխատանքի գիտական նորույթը*

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել և համեմատական գնահատման են ենթարկվել հետազոտվող խաղողի սորտերն ու դրանց կլոնները՝ ըստ ագրոկենսաբանական, արտադրատնտեսական և տեխնոլոգիական հատկանիշների: Բացահայտվել է սորտային և կլոնային առանձնահատկությունների ազդեցությունը խաղողի բերքի որակական ցուցանիշների, ինչպես նաև ստացվող գինիների ֆիզիկաքիմիական և օրգանոլեպտիկ հատկությունների ձևավորման վրա: Հիմնավորվել են գինեգործական արժեքավոր հատկանիշներով առանձնացող սորտերի և կլոնների ընտրության գիտական մոտեցումները՝ տեղական հողակլիմայական պայմաններում բարձրորակ գինու արտադրության համար:

### *Աշխատանքի գործնական նշանակությունը*

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել խաղողագործության և գինեգործության ոլորտներում՝ բարձրորակ հումքի արտադրության և մրցունակ գինիների ստացման նպատակով: Առանձնացված առավել արդյունավետ սորտերն ու կլոնները կարող են առաջարկվել արտադրական ներդրման համար, ինչը կնպաստի բերքի և արտադրանքի որակի բարձրացմանը: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել նաև սելեկցիոն աշխատանքներում, տնկանյութի ընտրության, նոր խաղողի այգիների հիմնման և գինեգործական ձեռնարկություններում հումքի նպատակային օգտագործման գործընթացներում: Աշխատանքի արդյունքները կարող են ծառայել որպես գիտագործնական հիմք խաղողագործության և գինեգործության հետագա զարգացման համար:

### *Ատենախոսության կառուցվածքը և ծավալը*

Ներկայացված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս հիմնական գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 23

աղյուսակ, 7 գծապատկեր և 3 նկար, աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 123 էջ, ներառյալ օգտագործված գրականության ցանկը, որը ընդգրկում է 143 գիտական աղբյուր:

*Ատենախոսության հիմնական բովանդակությունը*

Հեղինակը մասնագիտական գրականության ուսումնասիրմամբ հիմնավորել է կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Այնուհետև ատենախոսը ներկայացրել է հետազոտությունների նյութը և մեթոդները, որոնց օգնությամբ կատարվել է փորձարարական աշխատանքը: Հետազոտությունները իրականացվել են 2024-2025թթ.-ին Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանում գտնվող խաղողի ազգային կոլեկցիոն այգում: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել Սև Արենի սորտը և նրա կլոնները /Նոսր Արենի, Արենի կլոն N9, Արենի կլոն N15/: Ուսումնասիրվել է Սև Արենի սորտի և նրա կլոնների ագրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական և տեխնոլոգիական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը սեղանի կարմիր անապակ գինիների որակական հատկանիշների ձևավորման վրա:

Ստացված արդյունքները հաստատել են, որ սորտի ներսում առկա կլոնային բազմազանությունը կարևոր գենետիկ ռեսուրս է, որը հնարավորություն է տալիս առանց նոր սորտերի ստեղծման բարելավել հումքի և գինու որակը:

Կլոնային սելեկցիան հանդիսանում է Սև Արենի սորտի բարելավման մեթոդ՝ հնարավորություն տալով ստանալ տարբեր տեխնոլոգիական ուղղվածությամբ և բարձր որակական հատկանիշներով գինիներ:

Ուսումնասիրությունների հիման վրա ատենախոսը արտադրությանն է ներկայացրել արժեքավոր առաջարկություններ, որոնք ունեն կարևոր նշանակություն խաղողագործության և գինեգործության ոլորտներում:

Ատենախոսը առաջարկել է գինեգործական տնտեսություններին.

1. Ընդլայնել Նոսր Արենի կլոնի մշակությունը և օգտագործումը, քանի որ այն ապահովում է բարձր գունային ինտենսիվությամբ և հարուստ ֆենոլային կազմով կարմիր գինիների արտադրություն:
2. Արենի կլոն N 9-ը և N 15-ը օգտագործել թարմ և հավասարակշռված ոճի վարդագույն գինիների արտադրության համար:

3. Գինեգործության մեջ կիրառել կլոնային առանձնահատկություններին համապատասխան տեխնոլոգիական մոտեցումներ՝ հաշվի առնելով դրանց կենսաքիմիական բնութագրերը և խաղողի մեխանիկական կազմը:

Հետազոտությունների արդյունքում հեղինակը առաջարկում է նաև սննդամթերքի արտադրությունում ներդնել երկրորդային վերամշակման տեխնոլոգիաներ՝ խաղողի սերմերի և փլուշի կիրառմամբ 10 և 15 % օպտիմալ չափաբաժիններով:

Ներկայացված ատենախոսությունը գիտաարտադրական կարևոր նշանակություն ունեցող հետաքրքիր աշխատանք է, կան բավականին օգտակար նորություններ, առաջարկություններ, սակայն հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

*Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ*

1. «Արդյունքներ և քննարկում» բաժնում /էջ 42/ սորտի և կլոնի խաղողի մեխանիկական կազմի ցուցանիշների որոշման համար օգտագործվել են 5 -ական ողկույզներ: Սակայն ստացված տվյալների արդյունքները կլինեին ավելի հավաստի, եթե ուսումնասիրվող ողկույզների քանակը կազմեր 10-20 հատ:
2. Գտնում ենք, որ Պրոստոսերդովի մեթոդի նկարագրությունը պետք է ներկայացվեր «Հետազոտության նյութը և մեթոդները» բաժնում:
3. Գրականության ցանկը կազմված է ոչ համակարգված, աղբյուրները դասավորված չեն այբենական կարգով և ներկայացված են խառը լեզվային հերթականությամբ:
4. Ստենախոսության մեջ /էջ 95,96,97/ առկա են նկարներ՝ 1, 2, 3, որոնց վերաբերյալ տեքստում համապատասխան հղումներ չեն կատարված:
5. Ցանկալի կլիներ, որ աշխատանքում կամ հավելվածում ներկայացված լինեին ուսումնասիրվող սորտի և կլոնների լուսանկարները:
6. Ատենախոսության մեջ հեղինակի կողմից ներկայացված 7 գծապատկերները անվանվել են որպես «գրաֆիկներ» , ինչը տերմինաբանական առումով ճշգրիտ չէ, քանի որ գծապատկերը և գրաֆիկը գիտական գրականության մեջ ունեն տարբեր իմաստներ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գնահատելով Արմեն Կարենի Սոլոմոնյանի ատենախոսական աշխատանքը, կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունում բարձրացված հարցերն արդիական են և լուսաբանված են անհրաժեշտ խորությամբ և համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական աշխատություն, որը կատարված է գիտական պատշաճ մակարդակով: Տպագրված 7 գիտական հոդվածները և ատենախոսության սեղմագիրը համապտասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի Գիտական խորհրդի 2026թ.-ի հունիսի 30-ի թիվ 6 նիստում և արժանացել է դրական գնահատականի:

Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի Գիտական խորհրդի նիստին մասնակցել են

| | Ա.Ա. | Գիտական աստիճանը |
|---|---|---|
| 1 | Սարգսյան Գայանե | գյուղատնտեսական գիտ.դոկտոր |
| 2 | Ծերեթելի Իրինա | գյուղատնտեսական գիտ.դոկտոր |
| 3 | Թադևոսյան Լաուրա | գյուղատնտեսական գիտ.թեկնածու |
| 4 | Բալայան Ռայա | գյուղատնտեսական գիտ.թեկնածու |
| 5 | Մարտիրոսյան Գայանե | կենսաբանական գիտ.թեկնածու |
| 6 | Վարդանյան Իրինա | կենսաբանական գիտ.թեկնածու |
| 7 | Ավագյան Ալվինա | կենսաբանական գիտ.թեկնածու |
| 8 | Սառիկյան Կարինե | գյուղատնտեսական գիտ.թեկնածու |
| 9 | Կիրակոսյան Գոհար | գյուղատնտեսական գիտ.թեկնածու |
| 10 | Հարությունյան Զառա | գյուղատնտեսական գիտ.թեկնածու |

Արմեն Կարենի Սոլոմոնյանի «Խաղողի սորտի և կլոնի առանձնահատկությունները, դրանց անդրադարձը գինու որակական հատկանիշների վրա» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից սահմանված թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ունի գիտաարտադրական կարևոր նշանակություն, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, ներկայացված Ե.18.01 – «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն»-ի գիտության գծով տօրենի տեղակալ, գյուղ.գիտ.դոկտոր՝ Ի.Ս. Ծերեթելի

Բույսերի կենսատեխնոլոգիայի, ֆիտոպաթոլոգիայի և կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կենս.գիտ. թեկնածու՝ Ի.Վ.Վարդանյան

Ի.Ս.Ծերեթելու և Ի.Վ.Վարդանյանի ստորագրությունները հաստատում եմ , գիտ. քարտուղար, գյուղ.գիտ. թեկնածու՝ Լ.Մ.Թադևոսյան